«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

2 Մարտի 2021, N 8 - 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի N 1718-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 8-րդ ենթակետով՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2021 թվականի գործունեության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2020 թ. մարտի 2

Երևան

Հավելված
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2021 թվականի մարտի 2-ի N 8 - 2 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ծրագիրը մշակվել է՝ ելնելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) գիտական խորհրդի 2020 թվականի ապրիլի 6-ի N 8-1 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2020-2024 թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարական ծրագրով» ամրագրված հիմնական ուղղություններից և գերակայություններից:

Որպես համալսարանական ուղեղային կենտրոն՝ վերոնշյալ որոշմամբ ամրագրված գերակայություններն իրագործելու նպատակով և նման հաստատություններին բնորոշ ձևաչափով ու գործիքակազմով 2021 թվականին «Ամբերդ» հետազոտական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) շարունակելու է իր ներուժը ներդնել Համալսարանի հետազոտական կարողությունների զարգացման, Հայաստանում հանրային քաղաքականության բարելավման, ակադեմիական խոսույթի հարստացման, նոր գաղափարների գեներացման, կիրառական և միջգիտակարգային ուսումնասիրությունների իրականացման գործում՝ կամրջելով գիտելիքն ու քաղաքականությունը և նպաստելով առավել անվտանգ, բարեկեցիկ ու արդար պետության կառուցմանը:

Հաշվի առնելով հիմնադրումից ի վեր Կենտրոնի արձանագրած հաջողությունները, կուտակած փորձն ու ձևավորած հեղինակությունը, ինչպես նաև փորձագիտական և կազմակերպական ռեսուրսներն ու կարողությունները՝ 2021 թվականին Կենտրոնի հետազոտական գործունեության առանցքում են լինելու հետևյալ հիմնախնդիրները՝

- պատերազմի և COVID-19 համավարակի տնտեսական հետևանքների գնահատում, առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ որակապես նոր մոտեցումների առաջադրում,
- տարածաշրջանի երկրների և աշխարհաքաղաքական կենտրոնների հետ երկկողմ տնտեսական հարաբերությունների ուսումնասիրություն և նոր զարգացման հնարավորությունների բացահայտում,
- երկրի տնտեսության զարգացման գերակայությունների ուղղությամբ հետազոտությունների իրականացում,
- երկրի արդյունաբերական կարողությունների բարելավում,
- թվային տնտեսության զարգացում,
- երկրի արտաքին քաղաքականության արդյունավետության բարձրացում և անվտանգության ամրապնդում,
- բարձրագույն կրթության համակարգի արդիականացում,
- Համալսարանի միջազգայնացում և խորհրդանշական կապիտալի (ճանաչվածություն, վստահելիություն, հեղինակություն, ազդեցություն) գեներացում:

Վերոնշյալ ուղղությունների հիման վրա Կենտրոնը նախատեսում է հասնել հետևյալ հիմնական արդյունքներին՝

1. ՀՀ գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների, մասնավոր հատվածի, ինչպես նաև արտերկրի և հայրենական ուղեղային կենտրոնների հետ առկա համագործակցության ամրապնդում և գործընկերային ցանցի ընդլայնում,
2. որոշում կայացնողների, ակադեմիական հանրույթի և լայն հասարակության շրջանում Կենտրոնի ճանաչելիության ու հանրային քաղաքականությունում

ազդեցության բարձրացում,

3. ակադեմիական գործունեության ակտիվացում, այդ թվում՝ արտաքին (արտահամալսարանական) միջոցների ներգրավման միջոցով,
4. գիտական արդյունքների առևտրայնացման ուղղությամբ շարունակական աշխատանքների իրականացում:

ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հրապարակման ենթակա հետազոտություններ

1.1. Մրցույթով, ներբուհական միջոցներով հետազոտություններ

Մրցույթով, ներբուհական միջոցներով հետազոտությունները կիրականացվեն Համալսարանի գիտական խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի N 1 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական թեմաների և խմբերի ձևավորման, դրանցում ասպիրանտների և ուսանողների ներգրավման կարգին» համապատասխան: **Մրցույթի թեմաները կորոշվեն հետևյալ կառուցակարգով.** Կենտրոնի կողմից կիրականացվեն ներքին և արտաքին շահառուների հետազոտական կարիքների վերհանմանն ուղղված քննարկումներ, որոնց արդյունքների ամփոփմամբ կձևավորվեն առաջարկվող հետազոտական թեմաների ցանկը, դրանց արդիականության հիմնավորումները, կատարման ընթացքին, բովանդակությանը, հրապարակմանը, հանրայնացմանն առնչվող տեխնիկական առաջադրանքների նախագծերը և կներկայացվեն Կենտրոնի Փորձագիտական խորհրդի հաստատմանը: Կենտրոնի մասնագիտացման հիմնական բնագավառներն են՝ մակրոտնտեսական կայունության, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության, արտաքին հատվածի, ֆինանսական շուկաների և ինստիտուտների, մրցունակության, շուկաների, մրցակցության, գների և գնաճի, հանրային քաղաքականության, գործարարության, վարչարարության, արտաքին տնտեսական հարաբերությունների, կրթական գործընթացի կազմակերպման և կրթական տեխնոլոգիաների հետ կապված, ինչպես

նաև տնտեսության զարգացման համար հետաքրքրություն ներկայացնող, այդ թվում՝ միջգիտակարգային բնույթի այլ ուսումնասիրությունները:

Նախատեսվում է ներքին և արտաքին շահառուների կարիքների վերհանման և քննարկման արդյունքների հիման վրա մրցութային կարգով իրականացնել շուրջ 10 հետազոտական թեմաներ:

1.1.1. Հանրային քննարկումների անցկացում

2021 թվականին նախատեսվում է Հայաստանի տնտեսության, քաղաքականության և տարածաշրջանային նշանակության հարցերի, այդ թվում՝ Կենտրոնի կողմից իրականացվող հետազոտությունների թեմատիկ ուղղվածությունից բխող խնդիրների վերաբերյալ հանրային քննարկումների և կլոր-սեղանների անցկացում:

1.1.2. Առանձին փաստերի շուրջ անիմացիոն հակիրճ հոլովակներ

Ուղեղային կենտրոնների միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրականացվող հետազոտությունների, վերլուծությունների և դրանց արդյունքների նկատմամբ հանրության ուշադրությունը գրավելու, դրանք առավելագույնս տարածելու և այդպիսով Կենտրոնի ճանաչվածությունն ու ազդեցությունը մեծացնելու համար լայնորեն կիրառվում է վիզուալացման, այդ թվում՝ անիմացիոն կարճ հոլովակների պատրաստման և թողարկման պրակտիկան: Ելնելով վերոնշյալից՝ նախատեսվում է որպես Կենտրոնի «թվային ռազմավարության» բաղադրիչ աստիճանաբար ներդնել վերոնշյալ փորձը: Թեև այս խնդրի իրագործումը նախատեսված էր նաև Կենտրոնի 2020 թվականի գործունեության ծրագրով և պետք է մեկնարկեր դեռևս նախորդ տարի, սակայն հաշվի առնելով համավարակի, պատերազմական և հետպատերազմական շրջանում այս ուղղությամբ աշխատանքների կազմակերպման բարդությունները, ինչպես նաև ի հայտ եկած այլ առաջնահերթությունները, այս ուղղությամբ աշխատանքները կակտիվացվեն 2021 թվականին:

Հնարավորության դեպքում կմշակվեն 2020 թվականին իրականացված 13 հետազոտությունների վերաբերյալ 3-4 որպե տևողությամբ անիմացիոն տեսահոլովակներ:

1.2. Մրցույթով, արտաքին ֆոնդերի ներգրավմամբ հետազոտություններ

2021 թվականի ֆոնդահայթայթման աշխատանքները կշարունակվեն հետևյալ ուղղություններով.

- անդամակցություն ուղեղային կենտրոնների միջազգային ցանցերին և մասնակցություն թեմատիկ սեմինարներին, կոնֆերանսներին,
- հետազոտական նախագծերի պատրաստում պոտենցիալ ֆոնդերին ներկայացնելու համար, ինչպես նաև 2019-2020 թվականներին մշակված, բայց ֆինանսավորում չստացած նախագծերի համար ֆինանսավորման նոր հնարավորությունների հայթայթում: Կենտրոնի աշխատակազմի, ինչպես նաև համալսարանի որոշ ամբիոնների մասնակցությամբ կմշակվեն ծրագրային սեղմագրեր և ամբողջական հետազոտական նախագծեր հետևյալ հիմնադրամների ընթացիկ և հետագայում ակնկալվող մրցույթներին ներկայացնելու համար՝
  - Տնտեսագիտական փորձարարական հետազոտությունների միջազգային հիմնադրամ (International Foundation for Research in Experimental Economics),
  - Բալթյան և Արևելյան Եվրոպայի ուսումնասիրությունների հիմնադրամ (Foundation for the Baltic and East European Studies),
  - «Ֆոլկսվագեն» հիմնադրամ (The Volkswagen Foundation),
  - Շվեդական ինստիտուտ (The Swedish Institute),
  - Ամերիկայի Միացյալ Նահանգների Գերմանական Մարշալ հիմնադրամ (The German Marshall Fund of the United States),
  - Եվրասիական տնտեսական հանձնաժողով (Евразийская экономическая комиссия),
- մասնակցություն տեղական մրցույթներին՝

- ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի մրցույթներ,
- ՀՀ-ում գործող դեսպանությունների և արտասահմանյան կազմակերպությունների կողմից հայտարարվող մրցույթներ:

1.3. «Ամբերդ» տեղեկագրի պարբերական հրապարակում

2019 թվականի դեկտեմբերից առ այսօր լույս է տեսել «Ամբերդ» տեղեկագրի 7 համար: Տեղեկագիրը հրապարակվում է տարեկան 6-անգամյա պարբերականությամբ և 2021 թվականին նախատեսվում է շարունակել սկիզբ առած գործընթացը: Տեղեկագրի հոդվածների առանցքում կլինեն Հայաստանի տնտեսության, գլոբալ նշանակության և հանրային քաղաքականության այլ ոլորտներին առնչվող առավել արդիական խնդիրները, որոնք հիմնված լինելով փաստերի և փորձագիտության վրա՝ հանրամատչելի ձևաչափով կներկայացվեն լայն հանրությանը: Տեղեկագրի հրապարակման շարունակականության ապահովումը կնպաստի Համալսարանի և Կենտրոնի ճանաչվածության, հեղինակության և ազդեցության մեծացմանը, ակադեմիական խոսույթի զարգացմանը, Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների բացահայտմանը, ինչպես նաև տարբեր գաղափարների գեներեցման և զարգացումների տարբեր սցենարների մշակմանը: Միաժամանակ, արտերկրի լսարանին հասանելի դառնալու նպատակով 2021 թվականին նախատեսվում է տեղեկագրի մեկական օրինակ հրապարակել անգլերենով և ռուսերենով:

2020 թվականին «Ամբերդ» տեղեկագիրը ներառվել է Կիբեռլենինկա (Cyberleninka) բաց հասանելիության (Open Access) գրադարանում, ինչը հետազոտողների շրջանում բարձրացրել է ոչ միայն տեղեկագրի, այլև Համալսարանի և Կենտրոնի ճանաչվածությունն ու ազդեցությունը և ապահովել մեր հաստատության ներդրումը **բաց գիտության** (Open Science) հարացույցի զարգացման գործում: 2021 թվականին նախատեսվում է շարունակել աշխատանքները համանման այլ հարթակներում տեղեկագրի ներկայացվածությունը ընդլայնելու ուղղությամբ: Մասնավորապես՝ արդեն իսկ պաշտոնական հայտ է ներկայացվել հանրահայտ

ResearchGate ակադեմիական ցանցին՝ «Ամբերդ» տեղեկագիրն իրենց շտեմարանում գրանցելու համար:

1.4. Կենտրոնի ճանաչելիության բարձրացում

2021 թվականին նախատեսվում է շարունակել իրականացնել աշխատանքներ, որոնք կնպաստեն Հայաստանի և արտերկրի ակադեմիական շրջանակներում Կենտրոնի ճանաչելիության բարձրացմանը: Մասնավորապես՝ շարունակվելու են աշխատանքները միջազգային համացանցային տարաբնույթ մասնագիտացված շտեմարաններում Կենտրոնի գրանցման, տեղեկատվության պարբերական թարմացման, գործընկերային ցանցի ընդլայնման, Փենսիլվանիայի համալսարանի ուղեղային կենտրոններին վարկանիշավորող հաստատության հետ մշտական կապի ապահովման և փոխգործակցության խորացման ուղղությամբ:

2021 թվականին այս ուղղությամբ նախատեսվող քայլերից հարկ է առանձնացնել՝

- Կենտրոնի պաշտոնական կայքի ստեղծումը,
- սոցիալական ցանցերում Կենտրոնի ներկայացվածության ընդլայնումը,
- ՀԼՄ-ների հետ համագործակցության ակտիվացումը:

Մասնավորապես՝ նախորդ տարի Կենտրոնի կայքի ստեղծման ուղղությամբ սկսված աշխատանքները կշարունակվեն 2021 թվականին: Կայքի գործարկումից հետո նախատեսվում է ներդնել նաև Կենտրոնի հետազոտողների պատրաստած վերլուծական աշխատանքների նոր ձևաչափեր, այդ թվում՝ հանրային հնչեղություն ստացած և օրակարգային հարցերի վերաբերյալ փորձագիտական հակիրճ մեկնաբանությունների (comments) հրապարակման տեսքով: Բացի այդ, ՀՀ կենտրոնական բանկի, ֆինանսների նախարարության, վիճակագրական կոմիտեի և այլ մարմինների կողմից պարբերական հրապարակումների վերաբերյալ տարբեր թեմաների մասով կներկայացվեն Կենտրոնի համառոտ մոտեցումները: Վիճակագրական տարբեր աղբյուրների պարբերական ուսումնասիրությունը ոչ միայն կապահովի ընթացիկ հետազոտության անընդհատությունը, այլ նաև ի հայտ կբերվեն թեմաներ միջնաժամկետ և երկրաժամկետ հետազոտությունների համար:

Միաժամանակ, ի լրումն Facebook, LinkedIn և Twitter ցանցերում արդեն մի քանի տարի հաջողությամբ գործող էջերի՝ 2020 թվականի դեկտեմբերին Telegram հավելվածում ևս բացվել է Կենտրոնի պաշտոնական ալիքը, որն, ըստ էության, առաջինն է հայաստանյան ուղեղային կենտրոնների շրջանում: Նշենք նաև, որ ալիքի գործունեության մեկ ամսում բաժանորդների քանակը հասել է շուրջ ութ տասնյակի, ինչը թեև դեռևս մեծ թիվ չէ, սակայն հաշվի առնելով ալիքի բացումից հետո անցած կարճ ժամանակահատվածը, Հայաստանում մասնագիտացված ալիքների նկատմամբ հանրության շրջանում առկա հետաքրքրվածության մակարդակը և մի շարք այլ տեղական առանձնահատկություններ, կարելի է լավ արդյունք համարել: 2021 թվականին այս ուղղությամբ աշխատանքները նույնպես շարունակական բնույթ են ունենալու:

2. Արտաքին ֆոնդերի ներգրավմամբ կրթական ծրագրերի մշակում և համակարգում

Կրթական ծրագրերի ֆոնդահայթայթման համար նախատեսվում է.

- ՀՊՏՀ միջազգային կապերի բաժնի հետ համատեղ ներկայացնել նախագիծ Ավստրիական զարգացման գործակալության (The Austrian Development Agency) 2021 թվականին ակնկալվող մրցույթին:
- Կդիտարկվեն նաև Հետազոտությունների և բարձրագույն կրթության բնագավառում միջազգային համագործակցության շվեդական հիմնադրամի (The Swedish Foundation for International Cooperation in Research and Higher Education) մրույթներին դիմելու հնարավորությունները:

3. Այլ հետազոտություններ

3.1. Համագործակցություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ

Համալսարանը համապատասխան առաջարկներով դիմելու է ՀՀ անվտանգության խորհուրդ, ՀՀ առողջապահության, բարձր տեխնոլոգիական

արդյունաբերության, էկոնոմիկայի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններ, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով՝ Կենտրոնի հետազոտական ուղղությունների շրջանակներում ներկայացնելու իրենց գործառույթներին առնչվող հետազոտական թեմաներ:

Հետազոտական թեմաներն ամբողջացնելուց, համապատասխան շահառուների հետ քննարկելուց հետո դրանք կներկայացվեն Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը և սահմանված կարգին համապատասխան կհայտարարվեն մրցույթներ:

Արդեն իսկ ստորագրված հուշագրերի շրջանակներում կշարունակվի համագործակցությունը Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի, այլ մարմինների և կազմակերպությունների հետ:

Համագործակցության առաջնահերթ ուղղություն կդիտարկվի նաև Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրերի և ռազմավարությունների իրականացման նկատմամբ մշտադիտարկումը և բարելավման ուղղությամբ առաջարկների ներկայացումը, ինչպես նաև հանրային քաղաքականության մարտահրավերների ու բացերի ուսումնասիրությունը: Կենտրոնի կողմից առանձնահատուկ ուշադրության կարժանանան Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացված հանրային հնչեղություն ստացած իրավական ակտերի նախագծերը:

3.2. Մասնավոր պատվերով հետազոտություններ

Կենտրոնի հեղինակության բարձրացման, ինչպես նաև արտաքին մասնավոր շահակիցների որոնման դաշտում Կենտրոնի հետազոտական առաջարկի առավել արդյունավետ դիրքավորման նպատակով 2021 թվականին անհրաժեշտ է լուծել Կենտրոնի սեփական կայքի ձևավորման, ներկայացուցչական ծախսերում ոլորտային ցուցահանդեսներին մասնակցության ծախսերի ներառման, ինչպես նաև «Սփյուռ» և այլ տեղեկատվական համակարգերում Կենտրոնի հետազոտական առաջարկի փաթեթի ձևավորման և գրանցման խնդիրները: Մասնավորապես՝ տեղեկատվական համակարգերում Կենտրոնի հետազոտական առաջարկի առավել ընդգծման նպատակով նպատակահարմար է սեփական առաջարկը տեղակայել վերջինի գործունեության դասակարգչի հետևյալ դաշտերում՝ տեղեկատվություն, հետազոտություններ, մշակումներ, կրթություն, ծառայություններ, զարգացման ծրագրերի մշակում և իրականացում ուղղություններում:

Հաշվի առնելով, որ տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերի առավել արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ՝ ուղղված ֆինանսական գործիքների ներդրմանը, կառավարման համակարգերի բարելավմանը, արտադրական կարողությունների ընդլայնմանը, տնտեսության արտադրողական ներուժի զարգացմանը, տեխնոլոգիական առաջընթացին և օտարերկրյա ներդրումների խթանմանը, Կենտրոնը կարող է մշակել և ներկայացնել պետություն-մասնավոր հատված համագործակցության ծրագրերի նախագծեր:

3.3. Ներբուհական օգտագործման հետազոտություններ

2021 թվականին նախատեսվում է շարունակել Կենտրոնի կողմից ներբուհական օգտագործման հետազոտությունների իրականացումը: Այս նպատակով նախատեսվում է իրականացնել 1-2 հետազոտություններ:

Կենտրոնի կողմից կկազմակերպվի և կիրականացվի էսսեների 1-ական մրցույթ բակալավրիատի ուսանողների և մագիստրանտների շրջանում՝ տնտեսության համար առավել արդիական թեմաներով:

4. Դասընթացների անցկացում

Համավարակով պայմանավորված՝ իրավիճակի կայունացումից հետո 2021 թվականին նախատեսվում է կազմակերպել թեմատիկ դասընթացներ: Կախված թեմատիկ ուղղվածությունից՝ դասընթացների թիրախային լսարանը կարող են լինել ուսանողները, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, մասնավոր հատվածի և գործարար շրջանակները և առհասարակ հետաքրքրված անձինք:

Նախատեսվում է դասընթացներ կազմակերպել, առաջին հերթին՝ տնտեսական դիվանագիտության վերաբերյալ: Ընդ որում՝ նպատակային լսարանը պետք է լինեն պետական համակարգի աշխատակիցները և համակարգում աշխատել ցանկացողները: Դասընթացի նպատակը պետք է լինի պետական կառավարման համակարգի աշխատակիցներին այդ գիտելիքներով զինելը:

Կենտրոնի առաքելությունից բխող գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է նպաստել Համալսարանում թողարկվող մտավոր արտադրանքի որակի բարձրացմանը, դասախոսական կազմի համար թրեյնինգների կազմակերպմանը, մագիստրատուրայի ուսանողների շրջանակից ընտրել խումբ (8-10 հոգանոց) և նրանց հետ կազմակերպել հատուկ դասընթացներ տնտեսագիտական վերլուծության հմտությունների գործիքակազմի կատարելագործման նպատակով:

Ընթացիկ ակտիվությունը ապահովելու համար կարող են կազմակերպվել տնտեսագիտական և միջգիտակարգային թեմաներով ելույթներ, բանավեճեր, խաղեր և քննարկումներ:

Որպես դասընթացների կազմակերպման յուրահատուկ մեխանիզմ կդիտարկվի ամառային դպրոցի կազմակերպում:

5. Տվյալների բազայի ստեղծում

2021 թվականին նախատեսվում է ստեղծել տվյալների բազա, որը հնարավորություն կտա Համալսարանի բոլոր շահառուներին անվճար օգտվել համաշխարհային տնտեսությանը և Հայաստանի տնտեսությանը վերաբերող լայնածավալ տեղեկատվական ռեսուրսից և այդ տվյալների հիման վրա իրականացնել բազմաբնույթ հետազոտություններ: Տվյալների բազան իրենից կներկայացնի վիճակագրական տվյալների մուտքագրման, պահպանման, ելքագրման և գրաֆիկական պատկերների կառուցման հարթակ, եռալեզու՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, աշխատելու հնարավորությամբ: Նախատեսվում է, որ հարթակն օժտված կլինի ամբողջական ծրագրային ապահովման փաթեթով կամ կներառի անժամկետ օգտագործման լիցենզիայի տրամադրման ծառայություն:

Հարթակը բաղկացած կլինի 3 հիմնական բաղադրիչներից՝ Հանրային համակարգ, Կառավարման համակարգ և Օգտատիրոջ համակարգ: Տվյալների հետագա մուտքագրման աշխատանքները կապահովվի Կենտրոնի ուժերով:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2021 թ. մարտի 2

Երևան